30 ԱՐԾԱԹԻ ՉՄԱՐՈՂ ՀՄԱՅՔԸ...

Posted on September 10, 2022 by Keghart

Category: Opinions

Սամվել Խալաթյան, Երևան, 4 Սեպտեմբեր 2022

Նախախոսք

Գիտնականները պարզել են, որ հայկական առաջին դրամները հատվել են մ.թ.ա. 3-2-րդ դարերում և դրանք եղել են պղնձից:

Սակայն, գիտնականներին դեռևս չի հաջողվել պարզել, թե վաղնջական ժամանակներում, հայոց մեջ հատկապես ո՞ր թվականից է առաջացել 30 արծաթի նկատմամբ անկասելի հմայքը:

******

Հայաստանում մինչև այսօր էլ հնարավոր է լսել այսպիսի խոսակցություն.

-Ես Աստծուն չեմ հավատում: Ծնողներս կոմունիստ էին, ինձ աթեիստ են դաստիարակել:

Սրանից կարելի է հետևություն անել, որ անհավատությունը դաստիարակության արդյունք է: Սակայն, չկա այնպիսի մի դեպք, որ որևէ մեկն ասի.

-Ես դավաճան եմ: Ծնողներս հայրենիքի դավաճան էին, ինձ դավաճան են դաստիարակել:

Բայց արի ու տես, որ հայոց մեջ դավաճաններ միշտ եղել են, իսկ այսօր՝ է՛լ ավելի շատ: Նրանք, աննկատ, մեզ հետ, մեր կողքին են ապրել, մինչդեռ, ամեն հարմար պահի պատրաստ են եղել թիկունքից հարվածելու: Հարվածեցի՛ն:

ՀՀ Ազգային անվտանգության ծառայության քննչական բաժանմունքի (դեպարտամենտ) տեղեկատվություններից հայտնի է դառնում, որ պետական դավաճանություն կատարելու և դրան օժանդակելու համար քրեական հետապնդումներ են հարուցվել 42 անձանց նկատմամբ:

Իհարկե, հայրենիքին դավաճանելը թշնամուն սոսկ ռազմական գաղտնի տեղեկություններ տալով չի սահմանափակվում: Պատերազմի նախապատրաստ-մաման և ամոթալի պարտության թևջուկն ուշ թե շուտ պարզվելու է և, համոզված եմ, որ դավաճանների թիվը տասնակի, գուցե է՛լ ավելի է մեծանալու՝ և ոչ միայն հանրությանն անծանոթ անուններով:

Այդուամենայնիվ, որտե՞ղ, ո՞ր հնոցում են կոփվում, ո՞ր պիղծ «ծնդատանն» են ծնվում դավաճանները:

Խորհրդային տարիներին մենք ստիպված էինք մեր լեզուն ատամների տակ պահել, երբ դպրոցներում «Հայ ժողովրդի պատմություն» առարկան ուսուցանվում էր առավելապես բոլշևիկյան դարաշրջանի «հերոսական» անցքերի իմացությամբ:

Կոնկրետ հերոսներ էլ կային, որոնց համակվելը քաջալերվում էր՝ սկսած իր հարազատ հորը մատնած «հերոս-պիոներ» Գրիշա Հակոբյանից, մինչև ազգային հերոս գործիչներին կացնահարած Գևորգ Աթարբեկյանը: Նման թափթփուկներ բոլոր ժամանակներում են եղել և այսօր էլ կան, որոնք դյուրությամբ դառնում են սորոսական հիմնադրամների շահառուներ՝ իրենց սև գործը ժանգի պես տարածելով ու քայքայելով ազգային ոգու ազնիվ մետաղը:

Սորոսականների նպատակներից մեկն էլ հայտնի իրադարձությունները նուրբ ձեռնածվությամբ գլխիվայր ներկայացնելն ու տարածելն է, զիջումների գնով թշնամու հետ բարեկամանալը խաղաղության միակ երաշխիք համարելը, ժողովրդին ինքնամեղադրանքի, հլության ու հուլության մղելը:

Չբավարարվելով ներկայիս դեպքերն ու անցքերը սոփեստորեն ներկայացնելուց, դավաճանները փորձում են այդկերպ մեկնաբանել նաև ոչ վաղ անցյալի իրադարձությունները:

Ահավասիկ, 1988-90 թվականների դեպքերը, երբ Սումգաիթի, Կիրովաբադի, Բաքվի ջարդերից մազապուրծ, հալածված մեծ թվով հայեր բռնագաղթվեցին Հայաստան, իսկ տեղի ադրբեջանցիները, ԽՍՀՄ զինված ուժերի և կոմկուսի տեղական պաշտոնյաների հովանավորչությամբ ու պաշտպանվածությամբ, ավտոբուսներով տեղափոխվեցին Ադրբեջան: Նորօրյա ագիտատորները ջանք չեն խնայում նոր սերնդի շրջանում արմատավորել այն կարծիքը, թե ադրբեջանցիների նկատմամբ հայերը նույնպես դաժանությամբ են վարվել և հիշատակում են Գուգարքի շրջանի Շահումյան գյուղի դեպքերը, որի ընթացքում ադրբեջանցիներ սպանվեցին:

Սակայն, մինչև բուն այդ դեպքերին անդրադառնալը, որի ականատեսն եմ եղել, անհրաժեշտ եմ համարում հակիրճ տեղեկատվություն տալ այդ գյուղի ադրբեջանցիների մասին:

Ղարաքիլիսայի (հետագայում՝ Կիրովական, այժմ՝ Վանաձոր) արևելյան կողմի քաղաքամերձ Շահումյան գյուղը, որը հայտնի էր իր նախկին՝ Թուրքի Վարդանլու անվամբ, մշտապես վտանգ է ներկայացրել մերձակա հայկական բնակավայրերին՝ ահաբեկչություններով, անասունների գողություններով, արոտավայրերի զավթումով և այլն: 1918 թ.-ին, երբ թուրքական կանոնավոր բանակն արդեն Ղարաքիլիսայի մատույցներում էր և Հայկական բանակն ու կամավորները Նժդեհի զորահրամանատարությամբ մահուկենաց ճակատամարտ էին մղում դարավոր թշնամու դեմ, վարդանլեցիներն առիթը բաց չեն թողնում թիկունքից ահաբեկելու ղարաքիլիսայի բնակչությանն ու այդտեղ ծվարած հազարավոր գաղթականներին: Նրանց պատժելու, զսպելու համար, երիտասարդ ղարաքիլիսեցիների «Թռուցիկ խումբը», Վաղինակ Սարգսյանի հրամանատարությամբ, արշավում է Թուրքի Վարդանլու, ետ խլում ավարը և արժանի հարված հասցնում ահաբեկիչներին: Զինված

բախման արդյունքում թուրքերը զոհեր են ունենում: Եվ երբ թուրքական բանակը մտնում է Ղարաքիլիսա, վրիժառու վարդանլեցիները թիկունքից հարձակվում են խաղաղ բնակչության վրա և ասկյարների հետ, օրեր շարունակ գյուղը վերածում սպանդանոցի: Ահա թե ինչ է վկայում Խորեն ավագ քահանա Խանզադյանն իր «Հուշեր և տպավորություններ,1919 թ.» նոթերում. *«Ոգեւորված իրենց արյունակիցների գալուստից՝ շրջակա գյուղերի թուրք խուժանը, միացած ասկյարներին, սրախողխող արեց, թալանի ենթարկեց ամբողջ գյուղը: Դեռ չլուսացած՝ Վերին թաղը ձեռքից գնացել էր: Գեղածիծաղ Ղարաքիլիսան մի ահռելի սպանդանոց էր դարձել: … Զոհերի թիվը դժվար է ճշտել, բայց անշուշտ՝ մի քանի հազար»:*

Հայաստանի առաջին հանրապետության հռչակումից հետո Վարդանլուի թուրքերը լքում են գյուղը, հեռանում անհայտ ուղղությամբ: Բայց, ահա, 1920 թվականի դեկտեմբերի 2-ին, երբ ռուսական 11-րդ բանակի զորամասերը մուտք են գործում Ղարաքիլիսա, պարզվում է, որ զորքի հետ, վերադառնում են նաև վարդանլուցիները: Տեղացիներն ընդվզում են, չեն ցանկանում նրանց ընդունել: Եվ այդ միջոցին, զորքից առանձնանում է բաքվեցի մի հայազգի՝ Նարիմանով ազգանունով, բարձրանալով սայլի վրա կրակոտ ճառ է արտասանում հայ և թուրք ժողովուրդների դարավոր բարեկամության մասին, իսկ ազգամիջյան «որոշ անհամաձայնությունների» մեղքը բարդում է դաշնակցականների և մուսաֆաթականների վրա: Այդուհետ, թուրքերը վերաբնակվում են գյուղում, «Թռուցիկ խմբի» հրամանատար Վաղինակ Սարգսյանն աքսորվում է Սիբիր, այնտեղ կնքում իր մահկանացուն, իսկ Նարիմանովը բնակություն է հաստատում Կիրովականում և մինչև խոր ծերություն ստանում էր հին բոլշևիկների համար սահմանված բարձր թոշակ ու ամեն մի առիթով հյուրընկալվելով դպրոցականներին՝ պատմում էր իր «օրինակելի քաջագործության» մասին:

Կրկին հարցնենք. որտե՞ղ, ո՞ր հնոցում են կոփվում, ո՞ր պիղծ «ծնդատանն» են ծնվում դավաճանները:

Գանք Վարդանլուի ոչ վաղ անցյալի դեպքերին, որոնց, ինչպես ասացի ականատեսն եմ եղել:

1988-ին, Գուգարքի շրջանի գյուղաբնակ ադրբեջանցի տղամարդիկ, երկյուղելով, որ հայերը կարող են վրեժխնդիր լինել Սումգաիթում, Կիրովաբադում իրենց ազգակիցների վայրագությունների համար, զինվել և քաշվել էին մոտակա անտառներն ու լեռները: Այդ օրերին, Մոսկվայի հրահանգով, տեղի ղեկավարները կազմակերպեցին ադրբեջանական գյուղերի բնակչությանն անվնաս կերպով մինչև հայ-ադրբեջանական սահման տեղափոխելու գործը: Կիրովականցի երիտասարդներն ընդվզեցին, պահանջելով, որ զինված ջոկատները զինաթափվեն, ճանապարհվեն իրենց ընտանիքների հետ, քանզի մեծ վտանգ են ներկայացնում քաղաքի և մերձակա հայկական գյուղերի բնակիչների համար, և է՛լ ավելի անզուսպ կլինեն, երբ նրանց հարազատները տեղափոխված լինեն Ադրբեջան:

Ծահումյան գյուղի ադրբեջանցի զինված տղամարդիկ, որոնց զենքերը հիմնականում մարտական էին, գրավել էին Վանաձորի արևելյան բարձունքները: Նրանց ընտանիքներին հորդորվեց, որ լուր տան զինյալներին՝ վերադառնան, զենքը վայր դնեն և խաղաղ կերպով արտագաղթեն: Ի պատասխան դրա, հատկապես գիշերվա ժամերին, զինված ադրբեջանցիները փորձեցին ահաբեկչություններ կատարել Խնձորուտ թաղամասի բնակիչների դեմ: «Վերևներում» դեռ չէին համարձակվում կոնկրետ միջոցներ ձեռնարկելու հրահանգ տալ, իսկ իրավապահ մարմինների ուշադրությունը հիմնականում սևեռված էր ամենօրյա բազմամարդ հանրահավաքներին: Բնակչությունն անպաշտպան էր և քաղաքի որսորդները կազմակերպեցին զինված ադրբեջանցիներին զինաթափելու գործը:

Նոյեմբերյան այդ օրը, հանրահավաքի ժամանակ, լուր տարածվեց, թե Ծահումյան գյուղի մերձակա բարձունքում թեժ փոխհրաձգություն է: Հարյուրավոր մարդիկ ոտքով ու մեքենաներով շտապեցին դեպքի վայր: Գյուղի մուտքի մոտ միլիցիայի ծառայողները շղթա էին կազմել: Սկսվեց մի անպատմելի հրմշտոց, որն ավելի էր սաստկանում ոչ հեռու որոտացող կրակոցների ձայնից: Լուր տարածվեց, որ թե՛ հայերից և թե ադրբեջանցիներից վիրավորներ կան, բայց վերջիններից մեկը չի հանձնվում, շարունակում է կրակել: Քաղաքի դատախազը, որ հենց իմ կողքին էր, այլայլվեց, ապա ինչ որ բառեր քրթմնջալով, թե իրեն հարկավոր է շտապ ետ գնալ ու զանգահարել վերադասին, հեռացավ, իսկ քիչ անց վճռականորեն ետ եկավ և ի տես բոլորի... «ուշաթափվեց»:

Տարիներ անց, 2015 թվականի ապրիլի 29-ին, epress.am կայքին տված հարցազրույցում պարոն դատախազը, ի դեպ, այժմ՝ հանգուցյալ, հայերին մեղադրում է ազգային անհանդուժողականության մեջ, իսկ իր դերասանության մասին՝ նշում. *«Իմ մի կողմից միլիցիան էր, մյուս կողմից՝ ազգային անվտանգությունը, ձախ կողմից ցանկապատի ցանց էր. ժողովուրդն անցավ այդ կողմը ու մեզ վրա հարձակվեց: Ասում են, որ ուշաթափվել եմ, և ինձ տարել են այդտեղից»:* Սուտ: Նախ այդ ցանցը աջ կողմում էր՝ այն բարձունքի փեշին, որտեղ դիրքավորվել էին ահաբեկիչները, երկրորդ՝ ժողովուրդը մղվում էր դեպի նրանց և ոչ թե ետ՝ դեպի յուրայինները: Մախաթը պարկում չես թաքցնի, ինչպես անթաքույց է, որ ըստ հավաստի աղբյուրների՝ epress.am-ը սորոսական թեքում ունի և այսօր, սորոսականները, այդ հոդվածում նախկին դատախազի և նրա նմանների «վկայությունները» մատի փաթաթան դարձրած՝ այս և այլ փաստեր աղավաղելով, տարփողում են, թե հայերը դաժան վարվեցին ադրբեջանցիների հետ:

Կրկնե՞նք հարցը՝ որտե՞ղ, ո՞ր հնոցում են կոփվում, ո՞ր պիղծ «ծնդատանն» են ծնվում դավաճանները:

Պատասխանը մեկն է. օձն իրեն տաքացնողին է կծում:

Վերջաբան

Ամփոփելով բոլոր չափումները՝ քաշը, որակը, արծաթե մետաղադրամների տեսակը, հետազոտողները եկել են այն եզրակացության, որ Հուդան Հիսուսին մատնել է, եթե փոխադրենք ՀՀ դրամով, գրեթե 8.000.000 դրամով: Այսինքն՝ նա իր ծառայության համար ստացել է միլիոններ:

Հետեվություն օձի գլուխը ջնջխել է պետք և ոչ թե տաքացնել՝ գիրկդ առնելով:

There are no comments yet.